ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ
# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

*Հաստատվել է*
ԵՊԲՀ Գիտական խորհրդի 29.04.2016
թվականի թիվ 06 որոշմամբ,
Գիտական խորհրդի 28.06.2017
թվականի թիվ 09 որոշմամբ հաստատվել է
նոր խմբագրությամբ
Գիտական խորհրդի 28.02.2018
թվականի թիվ 02 որոշմամբ հաստատվել է
51-րդ կետի փոփոխությունը

Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Ուսման վճարի չափերի մասին» կանոնակարգով սահմանվում է Համալսարանի վճարովի համակարգի սովորողների ուսման վճարի չափերը և վճարման կարգը:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Համալսարանի անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրի, բակալավրիատի, մագիստրատուրայի, կլինիկական օրդինա-տուրայի, ինտերնատուրայի, ասպիրանտների, դոկտորանտների, հայցորդների, քոլեջի, մինչհամալսարանական կրթության սովորողների և սույն կանոնակարգով նախատեսված այլ սովորողների վրա:

Համալսարանի սովորողների ուսման վճարի չափերը սահմանվում են ըստ կրթության կազմակերպման ձևերի, ուսուցման լեզվի և իրավական ակտերով սահմանված այլ առանձնահատկությունների:

3. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրա-գույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Համալսարանի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ

4. 2016-2017 ուսումնական տարվանից Համալսարանի Ընդհանուր բժշկության ֆակուլտետի ինտեգրացված կրթական ծրագրով[1]՝ միասնական ընդունելության կանոններով վճարովի համակարգ ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 1.000.000 (մեկ միլիոն) դրամ ուսման վճար և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 16.670 (տասվեց հազար վեց հարյուր յոթանասուն) դրամ:

Նույն համակարգում մինչև 2016-2017 ուսումնական տարին ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 800.000 (ութ հարյուր հազար) դրամ ուսման վճար և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 13.340 (տասերեք հազար երեք հարյուր քառասուն) դրամ:

5. Համալսարանի Ընդհանուր բժշկության ֆակուլտետի մագիստրատուրա[2] ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 900.000 (ինը հարյուր հազար) դրամ ուսման վճար և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 15.000 (տասհինգ հազար) դրամ:

## ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ

6. 2016-2017 ուսումնական տարվանից Համալսարանի Ստոմատոլոգիական ֆակուլտետում[3]՝ միասնական ընդունելության կանոններով վճարովի համակարգ ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 1.000.000 (մեկ միլիոն) դրամ ուսման վճար և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 16.670 (տասվեց հազար վեց հարյուր յոթանասուն) դրամ:

Նույն համակարգում մինչև 2016-2017 ուսումնական տարին ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 800.000 (ութ հարյուր հազար) դրամ ուսման վճար և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 13.340 (տասերեք հազար երեք հարյուր քառասուն) դրամ:

[1] Ուսման տևողությունը 6 տարի
[2] Ուսման տևողությունը 2 տարի
[3] Ուսման տևողությունը 5 տարի

## ԴԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ

7. 2016-2017 ուսումնական տարվանից Համալսարանի Դեղագիտական ֆակուլտետի բակալավրիատ[4]՝ միասնական ընդունելության կանոններով վճարովի համակարգ ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 600.000 (վեց հարյուր հազար) դրամ ուսման վճար և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 10.000 (տաս հազար) դրամ:

Նույն համակարգում մինչև 2016-2017 ուսումնական տարին ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 580.000 (հինգ հարյուր ութսուն հազար) դրամ ուսման վճար և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 9.670 (ինը հազար վեց հարյուր յոթանասուն) դրամ:

8. 2016-2017 ուսումնական տարվանից Համալսարանի Դեղագիտական ֆակուլտետի մագիստրատուրա[5] ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 650.000 (վեց հարյուր հիսուն հազար) դրամ ուսման վճար և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 10.840 (տաս հազար ութ հարյուր քառասուն) դրամ:

## ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ

9. 2016-2017 ուսումնական տարվանից Համալսարանի Հանրային առողջության ֆակուլտետի՝ «Առողջապահության կազմակերպում և կառավարում», «Շրջակա միջավայրի հիգիենա» և «Համաճարակաբանություն» կրթական ծրագրերով մագիստրատուրա[6] ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 500.000 (հինգ հարյուր հազար) դրամ ուսման վճար և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 8.340 (ութ հազար երեք հարյուր քառասուն) դրամ:

2017-2018 ուսումնական տարվանից Համալսարանի Հանրային առողջության ֆակուլտետի՝ «Բուժհաստատությունների կառավարում» կրթական ծրագրով մագիստրատուրա[7] ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ ուսման վճար և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 25.000 (քսանհինգ հազար) դրամ:

---

[4] Ուսման տևողությունը 4 տարի
[5] Ուսման տևողությունը 1 տարի
[6] Ուսման տևողությունը 1,5 տարի
[7] Ուսման տևողությունը 1 տարի

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՄԱՆ

## ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ

10. Համալսարանի միջազգային կրթական համակարգի հայազգի ուսանողների ուսման վճարի չափերը, ըստ ֆակուլտետների՝

ա) «ՀՀ ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության» կանոններով Համալսարանի միջազգային կրթական համակարգ ընդունված հայազգի ուսանողների,

բ) «Միասնական կարգով ընդունված ուսանողների հայերեն ուսուցման համակարգից» Համալսարանի միջազգային կրթական համակարգ տեղափոխված հայազգի ուսանողների,

գ) այլ բուհերից Համալսարանի միջազգային կրթական համակարգ տեղափոխված հայազգի ուսանողների՝

**հայերեն և ռուսերեն լեզուներով ուսուցման համար սահմանվում են տարեկան ուսման վճարի հետևյալ չափերը.**

– ընդհանուր բժշկության ֆակուլտետ[8]՝ 1.100.000 (մեկ միլիոն հարյուր հազար) դրամ, և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 18.340 (տասութ հազար երեք հարյուր քառասուն) դրամ.

– ստոմատոլոգիական ֆակուլտետ[9]՝ 1.100.000 (մեկ միլիոն հարյուր հազար) դրամ, և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 18.340 (տասութ հազար երեք հարյուր քառասուն) դրամ.

– դեղագիտական ֆակուլտետ[10]՝ 720.000 (յոթ հարյուր քսան հազար) դրամ և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 12.000 (տասերկու հազար) դրամ.

**անգլերեն լեզվով ուսուցման համար սահմանվում են տարեկան ուսման վճարի հետևյալ չափերը.**

– ընդհանուր բժշկության ֆակուլտետ[11]՝ 1.600.000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 26.670 (քսանվեց հազար վեց հարյուր յոթանասուն) դրամ.

---

[8] Ուսման տևողությունը 6 տարի
[9] Ուսման տևողությունը 5 տարի
[10] Ուսման տևողությունը 5 տարի
[11] Ուսման տևողությունը 6 տարի

– ստոմատոլոգիական ֆակուլտետ[12]՝ 1.600.000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 26.670 (քսանվեց հազար վեց հարյուր յոթանասուն) դրամ.

– դեղագիտական ֆակուլտետ[13]՝ 1.400.000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամ և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 23.340 (քսաներեք երեք հարյուր քառասուն) դրամ:

11. Համալսարանի միջազգային կրթական համակարգի օտարերկրացի ուսանողների ուսման վճարի չափերը, ըստ ֆակուլտետների՝

ա) «ՀՀ ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կանոններով» Համալսարանի Միջազգային կրթական համակարգ ընդունված օտարերկրացի ուսանողների,

բ) «Միասնական կարգով ընդունված ուսանողների հայերեն ուսուցման համակարգից» Համալսարանի Միջազգային կրթական համակարգ տեղափոխված օտարերկրացի ուսանողների,

գ) այլ բուհերից Համալսարանի Միջազգային կրթական համակարգ տեղափոխված օտարերկրացի ուսանողների՝

**ռուսերեն լեզվով ուսուցման համար սահմանվում են տարեկան ուսման վճարի հետևյալ չափերը.**

– ընդհանուր բժշկության ֆակուլտետ[14]՝ 1.600.000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 26.670 (քսանվեց հազար վեց հարյուր յոթանասուն) դրամ.

– ստոմատոլոգիական ֆակուլտետ[15]՝ 1.600.000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 26.670 (քսանվեց հազար վեց հարյուր յոթանասուն) դրամ.

– դեղագիտական ֆակուլտետ[16]՝ 1.400.000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամ և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 23.340 (քսաներեք երեք հարյուր քառասուն) դրամ.

**անգլերեն լեզվով ուսուցման համար սահմանվում են տարեկան ուսման վճարի հետևյալ չափերը.**

[12] Ուսման տևողությունը 5 տարի
[13] Ուսման տևողությունը 5 տարի
[14] Ուսման տևողությունը 6 տարի
[15] Ուսման տևողությունը 5 տարի
[16] Ուսման տևողությունը 5 տարի

– ընդհանուր բժշկության ֆակուլտետ[17]՝ 2.400.000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) դրամ և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 40.000 (քառասուն հազար) դրամ.

– ստոմատոլոգիական ֆակուլտետ[18]՝ 2.400.000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) դրամ և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 40.000 (քառասուն հազար) դրամ.

– դեղագիտական ֆակուլտետ[19]՝ 1.600.000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ և մեկ կրեդիտի արժեք է սահմանվում 26.670 (քսանվեց հազար վեց հարյուր յոթանասուն) դրամ:

12. Առանձնահատուկ անհրաժեշտ դեպքերում օտարերկրացի (այդ թվում ոչ ռեզիդենտ) ուսանողների ուսման վճարի չափը կարող է սահմանվել համաձայն կնքված կրթության մասին պայմանագրի[20]:

13. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Վրաստանի Սամցխե-Ջավախք և Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված ու բնակվող հայազգի, Հայաստանում փախստական ճանաչված և ապաստան ստացած, ծագումով հայ քաղաքացիները, ինչպես նաև ծագումով հայ օտարերկրյա այն քաղաքացիները, որոնց մշտական բնակությունը օտարերկրյա պետությունում վտանգված է (առկա է կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ), բարձրագույն կրթության ուսման վճարը վճարում են Համալսարանի միասնական կարգով ընդունված հայերեն ուսուցման համակարգի ուսանողների համար սույն կանոնակարգով նախատեսված վճարի չափերով:

## ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ

14. Համալսարանի կլինիկական օրդինատուրայում սովորող ՀՀ քաղաքացի, հայերեն ուսուցման համակարգի կլինիկական օրդինատորների համար սահմանվում են հետևյալ տարեկան ուսման վճարի չափերը.

250.000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ հետևյալ մասնագիտությունների համար՝

1) ախտաբանական անատոմիա և կլինիկական մորֆոլոգիա,
2) այրվածքաբանություն,
3) թունաբանություն,

[17] ուսման տևողությունը 6 տարի
[18] ուսման տևողությունը 5 տարի
[19] ուսման տևողությունը 5 տարի
[20] կրեդիտները հաշվարկվում են ռեկտորի հրամանով

4) մանկական ֆթիզիատրիա,

5) ֆթիզիատրիա:

500.000 (հինգ հարյուր հազար) դրամ հետևյալ մասնագիտությունների համար՝

1) արյունաբանություն,

2) մանկաբուժություն,

3) մանկական ակնաբանություն,

4) մանկական անէսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա,

5) մանկական արյունաբանություն,

6) մանկական գաստրոէնտերոլոգիա,

7) մանկական գինեկոլոգիա,

8) մանկական էնդոկրինոլոգիա,

9) մանկական ինֆեկցիոն հիվանդություններ,

10) մանկական կլինիկական իմունոլոգիա և ալերգոլոգիա,

11) մանկական հոգեբուժություն,

12) մանկական նեֆրոլոգիա,

13) մանկական նյարդաբանություն,

14) մանկական նյարդավիրաբուժություն,

15) մանկական ուռուցքաբանություն,

16) մանկական պուլմոնոլոգիա,

17) մանկական ռեաբիլիտոլոգիա,

18) մանկական ռևմատոլոգիա,

19) մանկական ստոմատոլոգիա,

20) մանկական սրտաբանություն,

21) մանկական վիրաբուժություն,

22) մանկական վնասվածքաբանություն և օրթոպեդիա,

23) մանկական քիթ-կոկորդ-ականջաբանություն ,

24) մանրէաբանություն,

25) նարկոլոգիա,

26) նեոնատոլոգիա,

27) ռեաբիլիտոլոգիա,

28) տրանսֆուզոլոգիա և արյան պաշարում,

29) ֆիզիոթերապիա:

600.000 (վեց հարյուր հազար) դրամ հետևյալ մասնագիտությունների համար՝

1) անէսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա,
2) գաստրոէնտերոլոգիա,
3) դեղագիտություն,
4) դեղագործության կազմակերպում,
5) դեղանյութերի տեխնոլոգիա,
6) ընտանեկան բժշկություն,
7) ինֆեկցիոն հիվանդություններ,
8) կինեզոթերապիա,
9) կլինիկական դեղաբանություն,
10) կլինիկական իմունոլոգիա և ալերգոլոգիա,
11) հոգեբուժություն,
12) հոգեթերապիա,
13) հոմեոպաթիա,
14) մանուալ թերապիա,
15) ներքին բժշկություն,
16) նեֆրոլոգիա,
17) շտապ բուժօգնություն,
18) ուռուցքաբանություն,
19) պուլմոնոլոգիա,
20) ռևմատոլոգիա,
21) ռեֆլեքսաթերապիա,
22) սպորտային բժշկություն:

750.000 (յոթ հարյուր հիսուն հազար) դրամ հետևյալ մասնագիտությունների համար՝

1) անոթային վիրաբուժություն,
2) դատաբժշկական փորձաքննություն,
3) էնդոկրինոլոգիա,
4) կլինիկական լաբորատոր ախտորոշում,
5) կոսմետոլոգիա,
6) կրծքային վիրաբուժություն,
7) մաշկաբանություն և վեներալոգիա,

8) նյարդաբանություն,

9) նյարդավիրաբուժություն,

10) պրոկտոլոգիա,

11) սեքսապաթոլոգիա,

12) սրտաբանություն,

13) սրտային վիրաբուժություն:

850.000 (ութ հարյուր հիսուն հազար) դրամ հետևյալ մասնագիտությունների համար՝

1) ակնաբանություն,

2) դիմածնոտային վիրաբուժություն,

3) ընդհանուր վիրաբուժություն,

4) թերապևտիկ ստոմատոլոգիա,

5) ուրոլոգիա,

6) պլաստիկ վիրաբուժություն,

7) վնասվածքաբանություն և օրթոպեդիա,

8) քիթ կոկորդ ականջաբանություն:

1.050.000 (մեկ միլիոն հիսուն հազար) դրամ հետևյալ մասնագիտությունների համար՝

1) ընտանեկան ստոմատոլոգիա,

2) ճառագայթային ախտորոշում,

3) մանկաբարձություն և գինեկոլոգիա,

4) վիրաբուժական ստոմատոլոգիա,

5) օրթոդոնտիկ ստոմատոլոգիա,

6) օրթոպեդիկ ստոմատոլոգիա:

15. Օտար լեզվող սովորող ՀՀ քաղաքացի կլինիկական օրդինատորների համար սույն կետով նշված բոլոր մասնագիտությունների համար սահմանվում են 1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) դրամ:

16. Համալսարանի կլինիկական օրդինատուրայում սովորող օտարերկրացի հայազգի կլինիկական օրդինատորների համար սահմանվում են հետևյալ տարեկան ուսման վճարի չափերը՝

ա) Հայերեն և ռուսերեն ուսուցում.

– Համալսարանն ավարտած օրդինատորների համար՝ 1.100.000 (մեկ միլիոն հարյուր հազար) դրամ,

– այլ բուհեր ավարտած օրդինատորների համար՝ 1.300.000 (մեկ միլիոն երեք  հարյուր հազար) դրամ:

բ) Անգլերեն ուսուցում.

– Համալսարանն ավարտած օրդինատորների համար՝ 1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) դրամ,

– այլ բուհեր ավարտած օրդինատորների համար՝ 1.400.000 (մեկ միլիոն չորս  հարյուր հազար) դրամ:

17. Համալսարանի կլինիկական օրդինատուրայում սովորող օտարերկրացի կլինիկական օրդինատորների համար սահմանվում են հետևյալ տարեկան ուսման վճարի չափերը՝

ա) հայերեն և ռուսերեն ուսուցում.

– Համալսարանն ավարտած օրդինատորների համար՝ 1.800.000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) դրամ,

– այլ բուհեր ավարտած օրդինատորների համար՝ 2.000.000 (երկու միլիոն ) դրամ:

բ) անգլերեն ուսուցում.

– Համալսարանն ավարտած օրդինատորների համար՝ 2.400.000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) դրամ,

– այլ բուհեր ավարտած օրդինատորների համար՝ 2.900.000 (երկու միլիոն ինը  հարյուր հազար) դրամ:

Առանձնահատուկ անհրաժեշտ դեպքերում օտարերկրացի (այդ թվում ոչ ռեզիդենտ) կլինիկական օրդինատորների ուսման վճարի չափը կարող է սահմանվել՝ համաձայն կնքված կրթության մասին պայմանագրի:

18. Կլինիկական օրդինատուրայում երկրորդ մասնագիտությամբ կրթությունն իրականացվում է միայն վճարովի հիմունքներով, բացառությամբ նպատակային տեղերում սովորող կլինիկական օրդինատորների:

19. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Վրաստանի Սամցխե-Ջավախք և Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված ու բնակվող հայազգի, Հայաստանում փախստական ճանաչված և ապաստան ստացած, ծագումով հայ քաղաքացիները, ինչպես նաև ծագումով հայ օտարերկրյա այն քաղաքացիները, որոնց մշտական բնակությունը

օտարերկրյա պետությունում վտանգված է (առկա է կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ), կլինիկական օրդինատուրայի ուսման վճարը վճարում են սույն կանոնակարգի 14-րդ կետով նախատեսված վճարի չափերով:

20. Օտարերկրյա քաղաքացիների Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դեպքում կլինիկական օրդինատորի ուսման վճարը փոփոխվում և սահմանվում է սույն կանոնակարգի 14-րդ կետով սահմանված հայերեն ուսուցման վճարի չափերով՝ ՀՀ քաղաքացիություն ստանալուն հաջորդող կիսամյակից:

## ԻՆՏԵՐՆԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ

21. Համալսարանի ինտերնատուրայում հայերեն ուսուցման համար սահմանվում են ուսման վճարի հետևյալ չափերը՝

– ընդհանուր պրակտիկայի բժիշկ և ստոմատոլոգ մասնագիտությամբ՝ 1.000.000 (մեկ միլիոն) դրամ.

– ընդհանուր պրակտիկայի դեղագետ մասնագիտությամբ՝ 800.000 (ութ հարյուր հազար) դրամ:

22. Համալսարանի ինտերնատուրայում օտարերկրացի հայազգի սովորողների հայերեն և ռուսերեն ուսուցման համար սահմանվում են վճարի հետևյալ չափերը՝

– Համալսարանն ավարտած ընդհանուր պրակտիկայի բժիշկ և ստոմատոլոգ մասնագիտությամբ ինտերների համար՝ 1.100.000 (մեկ միլիոն հարյուր հազար) դրամ, դեղագետ ինտերների համար՝ 900.000 (ինը հարյուր հազար) դրամ,

– այլ բուհեր ավարտած ընդհանուր պրակտիկայի բժիշկ և ստոմատոլոգ մասնագիտությամբ ինտերների համար՝ 1.200.000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ, դեղագետ ինտերների համար՝ 1.000.000 (մեկ միլիոն) դրամ:

23. Համալսարանի ինտերնատուրայում օտարերկրացի սովորողների անգլերեն ուսուցման համար սահմանվում են վճարի հետևյալ չափերը՝

– Համալսարանն ավարտած ընդհանուր պրակտիկայի բժիշկ և ստոմատոլոգ մասնագիտությամբ ինտերների համար՝ 1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար), դեղագետ ինտերների համար՝ 1.000.000 (մեկ միլիոն),

‒ այլ բուհեր ավարտած ընդհանուր պրակտիկայի բժիշկ և ստոմատոլոգ մասնագիտությամբ ինտերների համար՝ 1.400.000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամ, դեղագետ ինտերների համար՝ 1.100.000 (մեկ միլիոն մեկ հարյուր հազար) դրամ:

24. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Վրաստանի Սամցխե-Ջավախք և Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված ու բնակվող հայազգի, Հայաստանում փախստական ճանաչված և ապաստան ստացած, ծագումով հայ քաղաքացիները, ինչպես նաև ծագումով հայ օտարերկրյա այն քաղաքացիները, որոնց մշտական բնակությունը օտարերկրյա պետությունում վտանգված է (առկա է կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ), ինտերնատուրայի ուսման վճարը վճարում են սույն կանոնակարգի 21-րդ կետով սահմանված վճարի չափերով:

25. Օտարերկրյա քաղաքացիների Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դեպքում ինտերնատուրայի սովորողի ուսման վճարը սահմանվում է սույն կանոնակարգի 21-րդ կետով սահմանված հայերեն ուսուցման վճարի չափերով՝ ՀՀ քաղաքացիություն ստանալուն հաջորդող կիսամյակից:

## ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ

26. Ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի սովորողների, հայցորդների (այսուհետ՝ հետազոտողներ) հայերեն առկա ուսուցման համակարգի համար սահմանվում է 1.000.000 (մեկ միլիոն) դրամ տարեկան վճարի չափ:

Սույն կետով սահմանված անձանց համար տարեկան ուսման վճար չի սահմանվում, եթե վերջիններս Համալսարանի աշխատող կամ զինծառայող հետազոտողներ են:

27. Հետազոտողների հայերեն հեռակա ուսուցման համակարգի համար և հետազոտող հայցորդների հայերեն ուսուցման համակարգի համար սահմանվում է 550.000 (հինգ հարյուր հիսուն հազար) դրամ տարեկան վճարի չափ:

Սույն կետով սահմանված անձանց համար տարեկան ուսման վճար չի սահմանվում, եթե վերջիններս Համալսարանի աշխատող կամ զինծառայող հետազոտողներ են:

28. Հետազոտողների օտար լեզուներով առկա ուսուցման համակարգի, այդ թվում «ՀՀ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության կանոններով» ընդունված ասպիրանտների համար սահմանվում է 2.400.000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) դրամ:

29. Հետազոտողների օտար լեզուներով հեռակա ուսուցման համակարգի, այդ թվում «ՀՀ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության կանոններով» ընդունված ասպիրանտների համար սահմանվում է 2.000.000 (երկու միլիոն) դրամ:

30. Հետազոտողի կրեդիտային համակարգով հայերենով ուսումնառության համար սահմանվում են վճարի հետևյալ չափերը.

ա) ընդհանուր ուսումնական կրթամաս (20 կրեդիտ)՝ 75.000 (յոթանասունհինգ հազար) դրամ,

բ) մասնագիտական ուսումնական կրթամաս (20 կրեդիտ)՝ 75.000 (յոթանասունհինգ հազար) դրամ:

31. Հետազոտողի կրեդիտային համակարգով օտար լեզվով ուսումնառության համար սահմանվում են վճարի հետևյալ չափերը՝

ա) ընդհանուր ուսումնական կրթամաս (16 կրեդիտ)՝ 150.000 (հարյուր հիսուն հազար) դրամ,

բ) մասնագիտական ուսումնական կրթամաս (21 կրեդիտ)՝ 350.000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամ:

32. Համալսարանի Էթիկայի կոմիտեի փորձաքննության համար սահմանվում են միանվագ վճարի հետևյալ չափերը՝

ա) անհատ հետազոտողների համար՝ 20.000 (քսան հազար) դրամ,

բ) կազմակերպությունների համար՝ 50.000 (հիսուն հազար) դրամ:

33. Համալսարանում հետազոտողի որակավորման քննություններին մասնակցելու համար սահմանվում են միանվագ վճարի հետևյալ չափերը՝

ա) որակավորման քննությունների ընդհանուր կրթական առարկաների համար՝ օտար լեզու և ինֆորմատիկա՝ 20.000 (քսան հազար) դրամ,

բ) մասնագիտական առարկաների համար՝ 30.000 (երեսուն հազար) դրամ:

34. Համալսարանի աշխատողների և Համալսարանի վճարովի համակարգի հետազոտողների համար որակավորման քննություններն ու Էթիկայի կոմիտեի փորձաքննությունն անվճար են:

35. Միայն նախնական փորձաքննության համար սահմանվում է 150.000 (հարյուր հիսուն հազար) դրամ վճարի չափը:

36. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Վրաստանի Սամցխե-Ջավախք և Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված ու բնակվող հայազգի, Հայաստանում փախս-

տական ճանաչված և ապաստան ստացած, ծագումով հայ քաղաքացիները, ինչպես նաև ծագումով հայ օտարերկրյա այն քաղաքացիները, որոնց մշտական բնակությունը օտարերկրյա պետությունում վտանգված է (առկա է կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ), հետազոտություն իրականացնելու (ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի, հայցորդության) ուսման վճարը վճարում են սույն կանոնակարգի 26-րդ և 27-րդ կետերով նախատեսված վճարների չափերով:

## ՔՈԼԵՋԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ

37. 2017-2018 ուսումնական տարվանից Համալսարանի քոլեջի վճարովի համակարգ ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է.

«Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ՝

ա) հիմնական ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգում սովորող ուսանողների համար սահմանվում են հետևյալ ուսման վճարի չափերը՝

- 1-ին կուրսի համար՝ 280.000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամ,
- 2-րդ կուրսի համար՝ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ,
- 3-րդ կուրսի համար՝ 320.000 (երեք հարյուր քսան հազար) դրամ:

բ) միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգում սովորող ուսանողների համար սահմանվում են հետևյալ ուսման վճարի չափերը՝

- 1-ին կուրսի համար՝ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ,
- 2-րդ կուրսի համար՝ 320.000 (երեք հարյուր քսան հազար) դրամ:

Համալսարանի քոլեջի «Քույրական գործ» մասնագիտությամբ՝

ա) հիմնական ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգում սովորող ուսանողների համար սահմանվում են հետևյալ ուսման վճարի չափերը՝

- 1-ին կուրսի համար՝ 280.000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամ,
- 2-րդ կուրսի համար՝ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ,
- 3-րդ կուրսի համար՝ 320.000 (երեք հարյուր քսան հազար) դրամ,
- 4-րդ կուրսի համար՝ 320.000 (երեք հարյուր քսան հազար) դրամ:

բ) միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգում սովորող ուսանողների համար սահմանվում են հետևյալ ուսման վճարի չափերը՝

- 1-ին կուրսի համար՝ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ,

- 2-րդ կուրսի համար՝ 320.000 (երեք հարյուր քսան հազար) դրամ,
- 3-րդ կուրսի համար՝ 320.000 (երեք հարյուր քսան հազար) դրամ:

Համալսարանի քոլեջի «Դեղագործություն» մասնագիտությամբ՝

ա) հիմնական ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգում սովորող ուսանողների համար սահմանվում են հետևյալ ուսման վճարի չափերը՝

- 1-ին կուրսի համար՝ 280.000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամ,
- 2-րդ կուրսի համար՝ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ,
- 3-րդ կուրսի համար՝ 320.000 (երեք հարյուր քսան հազար) դրամ:

բ) միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգում սովորող ուսանողների համար սահմանվում են հետևյալ ուսման վճարի չափերը՝

- 1-ին կուրսի համար՝ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ,
- 2-րդ կուրսի համար՝ 320.000 (երեք հարյուր քսան հազար) դրամ:

Համալսարանի քոլեջի «Լաբորատոր ախտորոշում» մասնագիտությամբ՝

ա) հիմնական ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգում սովորող ուսանողների համար սահմանվում են հետևյալ ուսման վճարի չափերը՝

- 1-ին կուրսի համար՝ 280.000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամ,
- 2-րդ կուրսի համար՝ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ,
- 3-րդ կուրսի համար՝ 320.000 (երեք հարյուր քսան հազար) դրամ:

բ) միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգում սովորող ուսանողների համար սահմանվում են հետևյալ ուսման վճարի չափերը՝

- 1-ին կուրսի համար՝ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ,
- 2-րդ կուրսի համար՝ 320.000 (երեք հարյուր քսան հազար) դրամ:

38. 2016-2017 ուսումնական տարին Համալսարանի քոլեջի վճարովի համակարգ ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է.

«Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ՝

ա) հիմնական ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգում սովորող ուսանողների համար սահմանվում են հետևյալ ուսման վճարի չափերը՝

- 1-ին կուրսի համար՝ 260.000 (երկու հարյուր վաթսուն հազար) դրամ,
- 2-րդ կուրսի համար՝ 280.000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամ,

– 3-րդ կուրսի համար՝ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ:

բ) միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգում սովորող ուսանողների համար սահմանվում են հետևյալ ուսման վճարի չափերը՝

– 1-ին կուրսի համար՝ 280.000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամ,

– 2-րդ կուրսի համար՝ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ:

## ՄԻՆՉՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ

39. Համալսարանի մինչհամալսարանական նախապատրաստական դասընթացներում սովորող հայազգի օտարերկրյա քաղաքացի ուսանողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝

– հայերեն և ռուսերեն ուսուցում՝ 500.000 (հինգ հարյուր հազար) դրամ վճար:

– անգլերեն ուսուցում՝ 800.000 (ութ հարյուր հազար) դրամ վճար:

40. Մինչհամալսարանական նախապատրաստական դասընթացներում սովորող օտարերկրյա քաղաքացի ուսանողների անգլերեն և ռուսերեն ուսուցման մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է 1.000.000 (մեկ միլիոն) դրամ վճար:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

41. Սույն կանոնակարգով չնախատեսված սովորողների ուսման վճարի չափերը սահմանվում են համաձայն ռեկտորի հրամանի կամ ուսանողի հետ կնքված կրթության մասին պայմանագրի:

42. Համալսարանի որոշակի կարգավիճակի ուսանողների համար կարող են սահմանվել առանձնահատուկ վճարի չափեր:

43. Օրենսդրությամբ կամ Հայաստանի Կրթության և գիտության նախարարի կամ ռեկտորի կողմից սահմանված (նախատեսված) դեպքերում ուսման վճարի չափեր կարող են սահմանվել համապատասխան իրավական ակտի կամ փաստաթղթի հիման վրա:

44. Ակադեմիական արձակուրդից, երեխայի խնամքի համար հատկացված արձակուրդից, զինվորական ծառայությունից վերադարձած ուսանողների ուսման վճարը, ինչպես նաև ուսման վճարի փոխհատուցումները մնում են անփոփոխ՝ համաձայն նրանց հետ կնքած պայմանագրերի և (կամ) ռեկտորի հրամանի:

45. Համալսարանի ֆակուլտետից այլ ֆակուլտետ կամ ուսուցման այլ համակարգ տեղափոխված ուսանողների ուսման վճարի չափը սահմանվում է տեղափոխված կուրսի համար սահմանված ուսման վճարի չափերին համապատասխան:

46. Այլ բուհերից Համալսարան տեղափոխված, Համալսարանից ազատվելուց կամ հեռացվելուց հետո Համալսարանում վերականգնված ուսանողների ուսման վճարի չափը սահմանվում է տվյալ կուրսում[21] սովորողների համար սահմանված ուսման վճարի չափերին համապատասխան, և ուսանողի հետ կնքվում է նոր պայմանագիր:

47. Ուսանողի հետ կնքված պայմանագիրը, այդ թվում այդ պայմանագրով նախատեսված ուսման վճարի չափերը ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ ուսանողը փոխել է ուսուցման համակարգը և այդ համակարգի համար սահմանված է ուսման վճարի այլ չափ:

48. Կլինիկական օրդինատուրայի, ինտերնատուրայի, ասպիրանտուրայի և մինչհամալսարանական կրթության դասընթացների համար ուսման վճարի վճարման ժամկետները սահմանվում են Համալսարանի կողմից կամ կրթության մասին պայմանագրերով:

49. Ուսանողի հեռացման դեպքում տվյալ կիսամյակի ուսման վճարը չի վերադարձվում:

50. Ուսանողի նախաձեռնությամբ՝ Համալսարանի և ուսանողի միջև կրթության մասին պայմանագիրը լուծվելու դեպքում Համալսարանի կողմից կատարվում է վերջնահաշվարկ, ըստ որի ուսման վճարի մուծման պարտականությունը ավարտվում է ազատման մասին հրամանով նշված ամսաթվին հաջորդող ամսվա 1-ից:

51. Անբավարար առաջադիմության պատճառով հեռացման ենթակա ուսանողը հեռացվում է համալսարանից քննաշրջանի (ներառյալ մարման շրջանները) վերջում (անկախ ընթացքում ձևավորված պարտքերից)՝ այդ ընթացքում օգտվելով ուսանողական իրավունքներից և կատարելով սահմանված պարտականությունները, բացառությամբ մինչև նոր կիսամյակի մեկնարկը վաղաժամկետ (մինչև քննաշրջանի ավարտը) հեռացման վերաբերյալ դիմած ուսանողների: *(Փոփոխություն՝ 28.02.2018, թիվ 02)*

[21] Տվյալ կուրսի ընդունման տարվա համար սահմանված ուսման վճարի չափով